

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երեվանի Պետական Համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի Խորհրդի  
9.03.2011թ. կայացած թիվ 6.10-11 նիստի  
Նիստին ներկա էին Խորհրդի 40 անդամներից 26 -ը:

Ընդհանուր քվեարկությամբ Խորհրդի նոր քարտուղար ընտրվեց օպտիկայի  
ամբիոնի դոցենտ Ի.Գ. Հարությունյանը:

### **Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

1. Հոբեյանական շնորհավորանքներ օպտիկայի ամբիոնի դոցենտ Վ. Բ. Պախալովի 70-ամյակի կապակցությամբ
2. Հեռակա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում
3. Ընթացիկ հարցեր

**Առաջին հարցի** կապակցությամբ ելույթներ ունեցան Ռ. Ավագյանը, Ռ. Հակոբյանը, Ա. Դանագուլյանը, Դ. Սեդրակյանը: Նրանք շնորհավորելով հոբեյարին, ներկայացրին նրան՝ որպես օրինակելի մարդու, դասախոսի, գիտնականի և վերջապես որպես մեծ հայրենասերի:

**Հեռակա ուսուցման** ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը ներկայացրեցին համապատասխան ամբիոնների վարիչները: Ներկայացվեցին ամբիոնների նիստերում ընդունված որոշումները ասպիրանտների գիտական ղեկավարների և նրաց հետազոտական աշխատանքների թեմաների վերաբերյալ:

**Որոշեցին** - Հաստատել համապատասխան ամբիոնների որոշումներն ասպիրանտական թեմաների և ասպիրանտների գիտական ղեկավարների վերաբերյալ:

**Ընթացիկ հարցերում** քննարկվեցին ձեռնարկների հրատարակման երաշխավորության և Սլավոնական համալսարանի ֆիզիկա-տեխնիկական ֆակուլտետի ասպիրանտ Ա.Տ. Մուրադյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցերը:

**Որոշեցին** - 1) Օպտիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզ.-մաթ. գիտ դոկտոր Վ.Բ. Պախալովի «Ոչ գծային ֆիզիկայի ներածություն» լաբորատոր աշխատանքների ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ հաշվի առնելով ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը:

2) Ա.Գ. Ղալունյանի Ա.Վ. Տուցուլյանի և Արծ. Ա. Սարգսյանի “Սովորական դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ” դասախոսությունների ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ հաշվի առնելով ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը:

3) Վերահաստատել՝ Սերոբ Տարոնի Մուրադյանի ատենախոսությունը Ա.04.07 («Կոնդենսացված վիճակի ֆիզիկա») և Ա.04.10 («Կիսահաղորդիչների ֆիզիկա»)

հարակից 2 մասնագիտություններով «Նյութերի և կառուցվածքների միկրոզոնոգրաֆիկալ հարթ կոճի մեթոդի և երկչափ կիսահաղորդչային կառուցվածքների կիրառմամբ» թեմայով:

Ղեկավարներ՝ ֆ.-մ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Պետրոսյան և ֆ.-մ.գ.թ., ա.գ.ա. Ս.Գ. Գևորգյան:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան

Ռ. Մ. Ավագյան

Խորհրդի քարտուղար

Ի.Գ. Հարությունյան